## † ՅՈՎՍԷՓ ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ

Չկայ այլ ևս նա... Կովկասեան Տնայնագործութեան ուսումնասիրութեան ռահվիրաներից մինը, նա, որ նոյն իսկ իւր կեանքը զոհ բերեց այս գործին։ Յ. Կարա-Մուրզան Կովկասեան Տնայնագործական Դրասենեակի յանձնարարութեամբ հինգ տարի շարունակ ճանապարհորդեց գրեթէ ամբողջ Կովկաս, մասնաւորապէս գորգագործութեան վերաբերեալ նիւթեր հաւաքելու։ Արագ տեղափոխութիւնը և մանաւանդ շատ գաւառների մալիարիային դրութիւնը, նրա մէջ արմատացրին այդ հիւանդութիւնը, որից նա վախճանուեց, (15 Դեկտ. 1905 թ.) չկարողանալով մշակել ու հրատարակել այն բազմաթիւ նիւթերը, որ մեծ դժուարութիւններով հաւաքել էր երկար տարիների ընթացքում։ Միայն նրա Ղուբայի շրջանում հաւաքած նիւթերը լոյս տեսան «Кустарный промышленность на Кавказѣ» հրատարակութեան առաջին պրակում։ Աշխատակցելով «Ազգագրական Հանդիսին» և լինելով նրա Խմբագրական Մասնաժողովի անդամ, հանգուցեալը կազմեց «Տնայնագործութեան վերաբերեալ նիւթեր հաւաքելու ծրագիրը» (Տես XII գիրք), և պատրաստում էր գորգագործութեան մասին մի ընդարձակ ուսումնասիրութիւն յատկապէս Հանդիսի համար, որ նոյնպէս թերի մնաց։

Հանգուցեալը ծնուել էր Ղարասուբազարում (Ղրիմ) 1874 թ. և թէպէտ միայն միջնակարգ կրթութիւն էր ստացել ուսանելով Գէորգեան ճեմարանում և Ներսիսեան դպրոցում, սակայն ինքնաշխատութեամբ շատ յառաջ էր գնացել և լաւ նախապատրաստուել տնայնագործութիւնը ուսումնասիրելու համար։ Ցանկալի է, որ նրա հաւաքած նիւթերը կարելոյն չափ խնամքով մշակուէին և հրատարակուէին՝ նրա յիշատակին նուիրուած։

ԵՐՈՒԱՆԴՈՒՆԻ